Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐ

Վ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայտնի է, որ Թումանյանի հիմնական տարերքը էպիկան էր, քնարերգությունը, մասնավորապես բանաստեղծությունը, նրա մոտ ունի համեմատաբար երկրորդական, բայց և մի առանձնահատուկ նշանակություն հեղինակի խառնվածքը, Բելինսկու տերմինով ասած, պաթոսը հասկանալու համար՝ այնքանով, որքանով իր ժանրային բնույթով հենց քնարերգությունը թարգմանն է ներքին այն ապրումների, որոնցով պայմանավորվում է գրողի ստեղծագործական կյանքի ընթացքը։

Այդ առթիվ ինքը՝ հեղինակը, իր մի բանաստեղծության («Բարձրից») մեջ ասում է.

Իմ բարի սրտի էն մեծ հույսերից,
Էն մեծ խոհերի անհուն խորքերից՝
Համբարձավ՝ ելավ իմ հզոր հոգին,
Որ բարձրից նայի Աստծու աշխարհին։

. . . .

Ու իր հարազատ բարձունքից լույս՝
Անչար, անարատ, անդորր ու անհույզ՝
Պարզ, ամենատես հայացքով նա
Ճառագեց ներքև աշխարհի վրա։

Նման հանրամարդկային հակումներով տոգորված բանաստեղծի «Հզոր հոգին» դուրս է գալիս ճառագելու աշխարհի ու մարդկության վրա։

Եվ ահա թե ինչ է բացվում նրա տեսադաշտում.

Տեսավ աշխարհը՝ գեղեցիկ, անվերջ,

Բայց, ավա՜ղ

Եվ հայրենիքներն անհուն նրա մեջ,
Եվ աստվածները նրանց զանազան,
Եվ սրբերը խիստ, խոժոռ ու դաժան։

Տեսավ՝ ոտնում են ամենն ամենին,
Ամեն հայրենիք՝ իրեն ծավալին,
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,
Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած։

Ու ոչ մի երկիր չկա հանգչելու,
Խոր, արարչական հանգիստ անխռով,
Ու ոչ մի անկյուն հեշտ շնչելու
Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

Ստեղծվում է դաժան մի բախում բանաստեղծի պատկերացումների երջանիկ աշխարհների ու զարհուրելի իրականության միջև։ Այդ ներհակություններից անաղարտ տվայտանքներ ու խորը անկումներ ապրելուց հետո նրա հոգին

Անսպառում վշտով վերստին նայեց
Իմ էս մեծ սրտին՝ աշխարհից էլ մեծ,—
Անսահման աշխարհ, և սեր ընդհանուր,
Եվ մարդը ուրախ, և երգ ամենուր...

Ու իջավ նորից էնտեղ հանգչելու.
Խոր, արարչական հանգիստն անխոով,
Էնտեղ հանգչելու, էնտեղ շնչելու
Էն մեծ խոհերով. էն անվերջ սիրով...

Ահա այստեղ և այսպես են լուծվում բանաստեղծի ներհակությունները, հասցնելով նրան հնարավոր նման մի ելքի միայն։

Եվ, հիրավի, հետագա նրա ստեղծագործության լեյտմոտիվը դառնում է իր հոգու, իր ձրգտումների ստեղծած «անսահման աշխարհը», ուր «սեր է ընդհանուր».

Եվ մարդը ուրախ, և երգ ամենուր...

և բանաստեղծի ողջ ստեղծագործությունը շնչում է «էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով»...

Այս իմաստով տվյալ բանաստեղծությունը սկզմ պատմությունն է նրա ստեղծագործական ողջ կյանքի։

Տեսնենք, թե որոնք էին իրականության այն մոայլ կողմերը, որ բացվեցին բանաստեղծի «վերից ճառագած» հայացքի լույսի տակ և ստիպեցին նրան նողկանքով երես դարձնել նրանից։

Էն նամփորդն է, նամ·ի տակին
Զարշարվում է կիսամահ,
Էն ծնողն է իր դավակին
Ողրում, կանչում... և չրկա...

Կույս աղջիկն է լլկանոի մեջ,
Ալևորը խոր բանում,
Էն կտրիճն է հայրենատենչ
Խիզախ հոգին ավանդում...

«Նոր պակաս, ուժը հատած, հազար ու մի ցավի տեր» գյուղացին է ողրում «մի տուն լիքը մերկ ու սոված մանուկներիս» չարքաշ գոյության պահպանման հոգսի ծանր բեռան տակ կքած, հոգիս ահով ու տագնապով լի, թե՝

Պարտքատերը գանգատ գնաց,
Քյոխվեն կրգա կծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մնաց,
Կրբարկանա, կանիծի:

Մինչդեռ՝

Էն օրն եկան բովչի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոոին ու բեգյարին...

Հետ գիշերային անդորրի խզումն է գյուղական խարխուլ խրճիթից, ուր՝

Մանուկները զոռում-զոչում,
Լալիս էին աղեկեզ.
— Նանի, նանի սոված ենք մենք,
Վե՛ր կաց, նանի՛, հա՛ց տուր մեզ...

Կյանքի ու աստծո անարդարությունների ձեռքին բազմաչարչար ու հիվանդ մայրիկի աղեկտուր թառանչն է, մայրիկի, որը չդիմանալով «ովալլուկ բալեքի անկրելի կսկիծին», աչքն է փակում հավիտյան՝ գնալու «Երկնքի մեծ պապիկի մոտ», որ նրանց հաց ուղարկի, օրենքի ու իշխանության անիրավությունների բռնության տակ տնքացող ծերունու հառաչանքն է, հայրենիքի ողբը, որը իր իսկ աչքերի առջև հոշոտվելով վերածվում է «ձմեռ ու սև մի հովտի», «սրածության ահարկու ձենից անբիծ անդորրի ու աղոթքի խլացումն է», որով աշխարհը փոխարկվում է մի ահռելի սպանդանոցի, ուր «մարդը մարդ է գիշատում», և այս բոլորը կարծես անվերջ, փոխանցվում են սերնդից սերունդ՝ ավելի ու ավելի վատթարանալով, այնպես որ անցնող ամեն մի սերունդ գալիքին կարող է կտակել իր նախորդից ստացած մի տխուր պատգամ միայն.

Ապրե՛ք, երեխե՛ք,
Բայց մեզ պես չապրեք:

Այս առաջին շրջանի բանաստեղծությունները վկայում են, որ հեղինակը հանդես է գալիս դեբյուտանտի պես, իրականությունը դիտողի, նրան լսողի և ըստ այդմ վերարտադրողի դերում։ Տիրապետող արտահայտման եղանակը էպիկան է. նյութը մատուցվում է մերթ հեղինակի պատմելով, մերթ բանաստեղծության հերոսի և մերթ էլ երկուսը հանդես են գալիս միասնաբար, որով ավելի արտահայտիչ ու կենդանի է դառնում մատուցվող նյութը՝ ներքին ու նկարագրական ամբողջականության մեջ։

Սակայն երկար չի տևում այս։ Աստիճանաբար այն ամենը, ինչ տեսնում է նա, ցավ ու կրսկիծ է ծնեցնում արդեն, ալեկոծում է բանաստեղծի «անշար ու անաչառ հոգու» անդորրությունը, մթնեցնում «վերից ճառագած հայացքի» պայծառությունը, մռայլով պատում լուսափայլ ճակատը, խափանում հանգիստը «անպատուղ օրերի» և գիշերային անդորրը, բերելով տառապանքի հոգեմաշ անվերջ գիշերներ.

Տանջվում եմ անհուն գիշերն անկողնում,
Տանջվում հուսահատ, վաստակած, տկար,
Եվ մտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Եվ գիշերը մութ, գիշերը երկար...

Դիտելու կամ լսելու և ըստ այդմ միայն վերարտադրելու նախորդ պատմողական եղանակին փոխարինում է սեփական հուզաշխարհում ստեղծագործության նյութն ապրելու և, ըստ այդմ, որպես իր սեփական ապրումը դրսևորելու քնարական (բառիս արդեն բուն նշանակությամբ) եղանակը։ Ստեղծագործության մեջ իբրև օբյեկտ հանդես եկող «նաս»-ն կամ «էնս»-ը տեղի են տալիս կամ «եսս»-ին ամենասերտ ու անմիջական օրգանական առնչությամբ արտաքին աշխարհի հետ և կամ հալված-համաձուլված երկուսի միասնական արտահայտություն «մենք» քնարական հերոսին։

Ահա այս շրջանի համար բնորոշ մի գողտրիկ օրինակ.

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով
Լող է տալիս իմ հոգին:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինքը կապուտակ
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ:

Հայրենի երկրի խորախոր վիշտը բանաստեղծի հոգում կարծես վերածվում է հոգեսարսռային տառապանքի։ Նրա վշտի անհուն ու սև ծովում լողալով, բայց ոչ մի ելք չգտնելով, բանաստեղծն այժմ ինքն է առնում այդ վշտի անհուն ու սև օվկիանն իր մեջ և չիմանալով ու՞ր գնալ, ի՞նչ անել, ու՞մ դիմել, զայրախառն հուսահատությամբ հառաչն է հեծեծում դեպի երկինք.

Տե՛ր, մինչև ե՞րբ մեր աչքերը թաց մնան.
Մեր գույժն հասավ հեռո՜ւ-հեռո՜ւ ազգերին,
Աշխարհ լցվեց մեր աղաղակ, մեր կական,
Ու չի անցել մեր տանջանքը տակավին:

Աստծուն դիմելով սակայն նրա հոգում կրկին արթնանում է մինչև այդ ուժաթափությունից ասես թմրած կսկիծը, մի կողմից, մյուս կողմից էլ, այդ արթնացած կսկիծը հիշեցնել է տալիս նրան՝ ամենքի կողմից աստծուն ամենագութ ու ամենազոր բարերարի համարումը, մինչդեռ այգ ողջ եղեռնն ու հրեշագործությունները կատարվել են նրա իսկ աչքի առաջ, իսկ ի՞նչ է արել նա մինչև այժմ, որպես ամենագութ բարերար, իր ամենազոր ուժով, չէ՞ որ այդ հրեշավոր եղեռնի թշվառ, անմեղ զոհերը չեն մոռացել նրա ողորմածությունը պատմել, օրհնել ու աղոթել նրան մինչև իսկ հոգեվարքի վայրկյաններին։

Ահա հոգեկան այս խռովքի պահին է, որ բանաստեղծը ողբաձայն հառաչն է ուղարկում անցյալի՝ իր այդ դրության համեմատ թերևս երանելի թվացող նախորդներին։

Կարծես նրանք միայն համեմատաբար զերծ լինելով այն հուսախաբությունից, որ ապրում է բանաստեղծի ժամանակակից սերունդը, ընդունակ կլինեն հասկանալու, ավելի շուտ, իրենց

համեմատաբար անվթար հողում տեղ կուներան ընդունելու ու ապրելու այդ վիշտն ու տառապանքը, դրանով իսկ փոքրիշատե սփոփելու, թեթևացնելու նրան.

Երանի՜ էր ձեզ, գովվա՛ծ երգիչներ,
Դուք երգում էիք վաղ առավոտյան,
Երբ որ երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հույսի փրկության:

Ա՜խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև,
Եվ մեր զգայուն սրտերն էլ իր հետ.
Ոսկի երազներ միրաժի նման
Մեր անապատում չքացան անհետ:

Այնքան պարզ ու անմիջական են հնչում պոետի խոսքերը, որ առանձին մեկնաբանության կարիք չկա։ Այստեղից միանգամայն բնական է ու հասկանալի նրա անցումը հոռետեսություն շնչող ինտիմ քնարերգությանը, այնքանով, որքանով այդ անողորմ աշխարհում «կրտրվելով կյանքի ամեն կապերից», իր «սիրած մարդկանց ու լավ հույսերի գերեզմանների շարքերի միջով» «անպտուղ, տխուր ու տաղտկալի օրերի» «ունայն տրտունջով» անցնող պանդուխտ ու հալածական, հուսալքված բանաստեղծի համար՝ այդ բոլորից կործանված իր ներքնաշխարհն էր մնում հենց այդ բոլորից գարշանքով շրջած հայացքի միակ հանգրվանը, պոետի ուշադրությունը փոքրիշատե զբաղեցնողն ու դրանով իսկ ստեղծագործության առժամանակյա առարկան.

Պանդուխտ եմ, հույրիկ, մանուկ օրերից.
Դնում եմ դեպի մի անհայտ երկիր՝
Կարված կյանքի ամեն կապերից,
Մենակ, տարագիր:

Հալածում են ինձ անցած օրերը.
Ներկա ժամերը հանգիստ չեն տալիս.
Հոգնած են վաղուց իմ թույլ ոտները,
Ու սիրտս ավելի:

Ես էլ վիրավոր գնում եմ փախած՝
Անհայտ օրերի խավարի ընդդեմ,
Ամենից զզված, ամենքին թողած,
Քեզ էլ կը թողնեմ...

Իրականությունն այլևս ոչինչ չունի իր մեջ պահած «մի անհայտ երկիր ձգտող» բանաստեղծի հոգուն բավականություն տալու համար, բացի այն ամենը, որ նրա համար միայն տառապանքներ բերում, կորուստ ու կսկիծ, այն ամենը, որ զզվեցնում, վանում, օտարում են մարդուն, կտրելով կյանքի բոլոր կապերից, սովամահության դատապարտված հոգին մատնելով անհանգրվան հալածական պանդխտության, այն ամենը, որոնց ամրողջությամբ ստեղծված դաժան բանտում փոքրիշատե ազատ ու երջանիկ կարող է զգալ իրեն միայն նա, ով որ «քնած ապրում է հանգիստ երկրի մի խորշում», որի երազներն ու ձգտումները սահմանափակվում են այդ խորշերի շրջանակներում, և ով կարող է նրա՝ այդ իրականության, մատուցած խղճուկ փշրանքներից բավարարված, գոհունակության ժպիտով աչքերը ճպել։ Իսկ բանաստեղծը, որ վաղուց արթնացած՝ «հայացքը անհայտին է ու հեռուն», միայն պիտի հոգնի «անհույս կարոտից, անվերջ ցանկալուց», տառապի ու կսկծա, «ունայն տրտունջով» անցկացնելով կյանքի «տխուր ու ձանձրալի, անպտուղ օրերը», ապրելով հուսալքության անամոթ տվս յտանքները։

Սակայն ամենքի համար անձնուրաց, բայց և ամենքից միայն խարվելով ու տանջվելով, ամենքից վրդովված ու փախած, դատարկյուն եղած բանաստեղծը մենակության մեջ էլ չի կարողանում փոքրիշատե հոգեկան բավականություն ու հանգիստ գտնել։ Ավելին, այդ անխուսափելի փախուստն ու մենակությունը նրա հոգին լցնում են միայն դառը, անպատում ցավով, հնչելով այնտեղից որպես նրա հոգու տրտունջի ոգրալի ձայներ, նրա համար, որ

Էլ ո՞ւմ առաջին սիրտդ բաց անես,
Ո՞ւմ համար երգես սրտալի երգեր,

Ո՞ր չքին սիրես, կյանքդ նվիրես,
էլ ինչպես ապրես անսեր, անրնկեր...

Ահա թե ինչն է լցնում նրա հոգին գառնություն ու կսկիծ, ահա թե ինչից է ողբում ու տրտնջում բանաստեղծը. քանզի ամենքը միայն.

Զնչեն մարդուկներ, լրբորեն հանդիստ,
Անսիրտ, փոքրոգի, զծծի ու կոպիտ.
Մեռնում են մարում նրանց հայացքից
Եվ հոգու ծգտում, և սրտի ժպիտ:

Դրանով էլ հենց

Ոտար են շուրջդ ու չեն հասկանում
Ոմանք քո վիշտը. ոմանք քո լեզուն:

Այստեղ խիստ բնորոշ է ու կարևոր Թումանյանի աշխարհայացքը, ըստ որում և ստեղծագործության պաթոսն ու նույնիսկ ստեղծագործական խառնվածքը հասկանալու համար.

Անտարբեր զալիք երջանիկ օրին.
Չգիտեն նրա կարոտը անքուն...

Այսպիսով, գորշ ներկայում հոռետես լինելով հանդերձ, նա չի կորցրել մարդկության երջանիկ ապագայի հավատը, նրա հորիզոնում վառ է մնացել հեռավոր հուսո մի արև, որը թեև հաճախ մոայլ ամպերը կիտելով սև ու անթափանց խավար՝ ծածկել, աներևութացրել են իրենց հետևում, բայց միայն ծածկել ու աներևութացրել և ոչ երբեք մարել հավիտենապես։

Եվ այս բանաստեղծությունը («Տրտունջ») բնորոշ է հենց նրանով, որ, մի կողմից, այս կամ այն չափով ամփոփում, ընդհանրացնում է իր մեջ նախորդ հուսահատական բանաստեղծությունների անկումային տրամադրությունն ու սպրումները, իսկ, մյուս կողմից, դրսևորում է բանաստեղծի երջանիկ ապագայի նկատմամբ ունեցած հավատը. մի կողմից, ներկայացնում է պոետի երկնքում մոայլ ամպերի կիտած սև ու անթափանց խավարը, մյուս կողմից, նրա մի պատռվածքից ցայտումն է ցուցադրում հետևում թաքնված հուսո ճառագայթների։

Այս հանգամանքը խիստ բնորոշ է Թումանյանին ու որոշիչ նրա աշխարհայացքի ձևավորման համար։ Վերցնենք հենց նույն շրջանում գրած նրա մի այլ, «Հայոց լեռներում» բանաստեղծությունը.

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
Էն անլույս մթնում
Երկար դարերով գնում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դժար լեռներում:

Այսպես և շարունակվում է բանաստեղծության դարը, մոայլ ու դաժան շունչը. բայց

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Երկնքի ծերին,
Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում.
Կանաչ լեռներում:

Իսկ քիչ ավելի ուշ, մանավանդ երբ արդեն նա դուրս էր եկել վերոհիշյալ հոգեկան ճգնաժամից, ավելի է ամրանում նրա հավատը և տեսեք, թե ինչպիսի անսասան շեշտով է հնչում այն «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մեջ, թեև այն գրված է 1915 թվականին, երբ Թուրք մարդախողխողների կողմից կատարված էր հայկական անօրինակ եղեռնը.

Ու պիտի գա նանուր կյանքի արշալույսը վառ հազած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին.

Անսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով.
Իմ նոր հայրենիք,
Հզոր հայրենիք...

Եվ վերջապես, այս տեսակետից խիստ բնորոշ է Նրա նախորդ ստեղծագործական շրջանի մի բանաստեղծություն.

Երանություն էր խոստացել հույսս ինձ,
Սակայն չգտա նրան կյանքի մեջ.
Բայց չեմ վհատել. անսպառ մի իղձ
Դեռ ինձ մղում է դեպ հառաջ անվերջ:

Հառաջ, կռվելով. և կգա մի օր,
Որ կընկնի ներկան վատչվեր. դաժան.
Նրա ավերի վերա փառավոր
Ապագան լուսո կկանգնի նրան:

Սակայն հարց է ծագում. ինչո՞վ բացատրել հապա այն հանգամանքը, որ բանաստեղծը ներկայի մեջ հասնելով նույնիսկ անհուսալի հոռետեսության, ի վերջո չի կորցնում հավատը ապագայի նկատմամբ։

Թումանյանի ստեղծագործությունները ուսումնասիրելիս անմիջապես աչքի է զարնում մի հիմնական երևույթ.— Նրա ստեղծագործությունների, ըստ որում և աշխարհայացքի ու գաղափարների «անանձնական» բնույթը, մի հանգամանք, որով նա կատարյալ հակադրակ է ներկայացնում Բայրոնին, թեև մենք իր տեղում նշեցինք բայրոնյան որոշ տրամադրությունների առկայություն Թումանյանի ստեղծագործություններում։ Իսկ ինչով բացատրել այդ։ Անշուշտ, մի կողմից, նրանցից յուրաքանչյուրի ապրած հասարակական-քաղաքական միջավայրի նրանց վրա ունեցած ներգործության բնույթով, իսկ մյուս կողմից, այդ ներգործման բնույթը նաև ինքնին պայմանավորող նրանց մարդկային խառնվածքով։

Բավական է հիշել, որ Բայրոնը ապրել ու ստեղծագործել է միանգամայն որոշակի հասարակական հողի վրա, և այդ հասարակայնորեն որոշակի ու հաստատուն՝ բանաստեղծի հայրենիքը իր ձեռքին սեփական ամրացված իշխանություն ունենալով, միաժամանակ բռնապետ էր նաև ուրիշ ժողովուրդների ու նրանց հայրենիքների վրա. այնպես որ հայրենյաց ազնիվ զավակի օգնության նա բնավ կարիք չուներ, որպեսզի չարժեր նրա հայրենասիրական խիղճը, ձգեր իրեն, ամրացներ իրենով պայմանավորված որոշակի հասարակական-քաղաքական իդեալների։ Ընդհակառակը, իր այդ իշխանությամբ հենց նա բռնապետ էր նաև իր սեփական ժողովրդի վրա, հնարավոր չափով խեղդելով մարդկային անհատականության ազատությունն ու իրավունքները՝ հօգուտ պետական ամրացված իշխանության։ Դրանով էլ հենց նա կարող էր միայն վանել, օտարել իրենից իր ազնվահոգի ու ազատատենչ զավակին, հասցնել նրան ներանձնացման, անհատապաշտական տրամադրությունների և այն բանին, որ իր մեջ հարազատ ու նրան փոքրիշատե բավականություն տվող ոչինչ չունենալով՝ մղեր տիեզերական անհագ ու անհանգիստ գեգերումների...

Մինչդեռ որքան էլ Թումանյանի պայծառ հայացքը «անհայտին ու հեռուն» հառված լիներ, որքան էլ նրա սիրտը լիներ «անհունները թափառելիս», միևնույն է, չէր կարող սառնասրտորեն դիտել ու անտարբեր մնալ իր իսկ աչքի առջև հոշոտվող, «սև ու սուգի մի հովտի» վերածվող հայրենիքի վշտին, լլկանքի ու սովամահության, սրի ու հրի մատնված հայրենակիցների աղեկտուր թառանչին...

Վաղուց թեև իմ հայացքը անհայտին է ու հեռվում,
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մղկտում է սիրտս ավեր քո թառանչից աղեկեզ.
Ու գաղթական զավակների լուռ շարքերից ուժասպառ.
Եվ գյուղերից, և շեներից՝ տխուր, դատարկ ու խավար.
Զարկված հայրենիք,
Զրկված հայրենիք:

Ահա թե ինչն է և ինչպես բանաստեղծի «անհայտին ու հեռուն» հառված հայացքն ու «անհունները թափառող սիրտը» ձգում դեպի ինքը, կապում իրեն, ստիպում ապրել իր հետ, իրենով, իր կյանքով։

Թումանյանի երբեմնի սերը Բայրոնի նկատմամբ հետևանք է ոչ թե նրանց կատարյալ հոգեհարազատության, այլ այն վշտալի տրամադրությանն առհասարակ, որով համակված են նաև բայրոնյան ստեղծագործությունները։ Եվ դա միանգամայն բնական է։ Թումանյանի այդ շրջանի հոգեկան ճգնաժամը ստեղծում է հուսախաբված հոռետեսական մի տրամադրություն, որը, իսկապես, էությամբ բոլորովին տարբեր լինելով բայրոնիզմից, առերևույթ շատ նման էր նրան։

Սակայն այստեղ մեզ համար կարևոր է մի հանգամանք. որքան էլ Բայրոնի իդեալները իրենց բնույթով լինեին անհատապաշտական, միևնույն է, այդ անհատը, նույնիսկ իր մենակության մեջ (գուցե և դրանով հենց ամենից ավելի) անխուսափելիորեն պայմանավորված է գոյություն ունեցող հասարակական հարաբերություններով։ Հենց այդ պատճառով էլ իրագործել իդեալը տվյալ անհատի նկատմամբ, նշանակում է վերափոխել իրականությունը համապատասխան ձևով, վերափոխել այնպես, որ այդ անհատը կարողանա ազատ ու անկաշկանդ հանդես դալ հասարակության մեջ, կարողանա ինքնակամ տնօրինել իր կեցությունը։ Հենց դրանով էլ Բայրոնի անհատապաշտական գաղափարները ոչ թե ազատում են նրան իրականությունը վերափոխելու ծանր անհրաժեշտությունից, այլ ավելի հրամայական են դարձնում դրա պահանջը, ավելի մեծացնում վերափոխման բովանդակությունը։

Սակայն ի՞նչ կարող էր ունենալ նա որպես միջոց իրականության այդ անհրաժեշտ վերափոխման, իր այդ անհամեմատ մեծացած իդեալների իրականացման համար, ի՞նչ — եթե ոչ միայն ամենից ու հասարակությունից կտրված, ներանձնացած մոայլ ու մենավորիկ իր անհատին, մի այդպիսի վիթխարի ու հրեշավոր իրականության դեմ. մի հանգամանք, որը չէր կարող նրան զգալ չտալ իր անզորությունն ու, եթե կարելի է ասել. ընդվզման անմտությունը։

Ենդիրը բոլորովին հակառակ է Թումանյանի մոտ։ Նրա մի կործանվող ժողովրդի զավակ լինելու և այդ ժողովրդի հետ հոգով, էությամբ հալվելու-ձուլվելու հանգամանքը ոչ թե կործանում է տանում նրան, այլ, ընդհակառակը, դառնում է նրա փրկության գրավականը։

Եվ այդ միանգամայն հասկանալի է։

Դրանով հենց, հակառակ Բայրոնի, նա սահմանափակվում է որոշ անհամեմատ ավելի նեղ և գործող իրականության շրջանակներում այս կամ այն չափով տեղավորվող կոնկրետ հասարակական իդեալներով. մի կողմից, այդ իդեալների նեղության, կոնկրետության պատճառով նրանց իրականացման հնչտության, մյուս կողմից, նրանց ունեցած հասարակական բնույթի պատճառով հենց իրականացման համար հասարակության վրա հենվելու, հասարակությանը իբրև հող, իբրև մի վիթխարի միջոց ունենալու հանգամանքը նրա համար հաստատում են այդ իդեալների երբևէ իրականացման հնարավորության հավատը։

Եվ այդ հավատը դառնում է առհավաչյա Թումանյանի համար, իրականությունից զզվելով՝ ապաստանելու իր հոդում, ապրելու այնտեղ ստեղծած իդեալական աշխարհով և մարմնավորելու այն իր ստեղծագործությունների մեջ։ Դրա համար նա թեմաներ է ընտրում մե՛րթ նահապետական, մե՛րթ հեքիաթների հրաշալի, մերթ լեգենդար ու առասպելական աշխարհներից, որոնց հերոսները հասարակ կամ դյուցազնական, առօրեական կամ արտասովոր մարդիկ են, որոնցից ոչ մեկն է ինքը՝ հեղինակը, բայց, վերջին հաշվով, ամեն մեկը այս կամ այն դրսևորումն է այն իդեալականի, որ ունի նա մարդու ու մարդկության նկատմամբ։

Դրա յուրօրինակ մի արտահայտությունն է նաև նրա անցումը մանուկների անմեղ ու կուսական, կենսուրախ ու զվարթություն շնչող, իրականության աղտեղություններից դեռևս անվթար մնացած հոգեպարար աշխարհը և նրա խոր ու բազմակողմանի, սիրալիր դրսևորումը բանաստեղծի կողմից։ Եվ վերջապես այդ ոգով է տոգորված ամբողջապես նրա կյանքի փիլիսոփայությունը։

Ահա այսպես են լուծվում Թումանյանի ներհակությունները, այս ձևով է որոշվում նրա ելքը հոգեկան հասունացած ճգնաժամից։